

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2016 թվականի մայիսի 27-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. 2016 թվականի ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների մասին:
2. 2016 թվականի ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասընթացներին նախապատրաստվելու մասին:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Լսեցին – Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2016 թվականի ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների մասին /զեկուցող Ն. Ա. Կուտուզյան/:

Նշվեց, որ ըստ ժամանակացույցի՝ ավարտական 5-րդ կուրսերի յոթ բաժիններում կազմակերպվել են ամփոփիչ ատեստավորման քննություններ: Ամփոփիչ ատեստավորման քննությունները կազմակերպվել են պատշաճ մակարդակով: Քննությունների ընթացքում արձանագրվել են բազմաթիվ լավ պատասխաններ, որոնց մասին իրենց հաշվետվություններում նշել են ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովների նախագահները, սակայն ունեցել ենք նաև թույլ պատասխաններ, որոնք ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների գնահատմամբ արժանացել են անբավարար գնահատականի:

Արտահայտվեցին – Ա. Ե. Համբարձումյանը, Ա. Ա. Ոսկանյանը

Նշվեց, որ 2016 թվականի ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասընթացներին նախապատրաստվելու նպատակով դեկանատն ամբիոնների և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի հետ համատեղ ճշտում է <<E-learning.gsu.am>> 2-րդ կիսամյակում նախատեսված դասընթացների դասախոսությունների, հարցաշարերի առկայությունը, գրություններ է նախապատրաստել ՀՀ ՊՆ-ում, ՀՀ Ոստիկանությունում և այլ մարմիններում աշխատող ուսանողների՝ դասընթացներին մասնակցելու թույլտվության նպատակով, ինչպես նաև ըստ ակադեմիական ծանրաբեռնվածության կազմվել է դասացուցակը:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուտուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Ա. Ա. Ոսկանյան